

ՂԱԶԱՐԱՅ ՓԱՐՊԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ¹

Ա. Սկիզբն առաջին գրոց պատմութեանն Հայոց, որում սկիզբն արարեալ պատմեաց ստուգիւ այրն երանելի Ագաթանգեղոս, սկսեալ² ի մահուն³ Արտեւանայ յԱրտաշրէ յորդոյ Սասանայ⁴ բռնաւոր Ստահրացւոյն⁵. Եւ զդարձ աշխարհիս Հայոց յանգիտութենէ կռապաշտութեան յաստուածգիտութեան ճշմարտութիւն ի ձեռն սրբոյ Նահատակին Գրիգորիսի. որոյ անուն եւ զգիրսն անուանեալ կոչեն Գրիգորիսի: 2 Երկրորդ գրոց սկիզբն արարեալ պատմելոյ ի կարգէ առաջին գրոցն՝ զիրս բազմափոփոխ աշխարհիս Հայոց, զբարեաց եւ զչարեաց, զվարս եւ զգործս զարանց սրբոց եւ զպղծոց, զժամանակի պատերազմաց եւ զխաղաղութեան: 3 Պատմեալ զայս ամենայն Փոստոս ոմն Բուզանդացի, մինչեւ ցթագաւորութիւնն Արշակայ (որդւոյ Պապայ, որդւոյ Արշակայ)⁶, որդւոյ Տիրանայ. առ որով թագաւորութեամբ բաժանեալ աշխարհս Հայոց՝ պատառեցաւ յերկուս ծուենս, ըստ աւրինակի հնացեալ ձործոյ: 4 Եւ աւարտեալ աստանաւր զբան պատմութեան իւրոյ՝ մնացուցեալ հանգոյց. զոր անուանեալ կոչեն զանուն գրոցն Հայոց պատմութիւն:

5 Երրորդ Պատմութիւնս այս ի կարգէ նորին գրոց շարագրեալ⁷ տկարութեանս մերում. յոր հարկաւորեալ հրամանաւ իշխանաց եւ բանիւ սուրբ վարդապետաց՝ տուաք զանձինս յայսպիսի գործ կարելոր, չիշխեցեալ ընդդիմանալ. յիշելով ի Սուրբ Գրոց *զսպառնալիսն անհնազանդից որդւոցն*^ա եւ զորս գրէ ներողութիւն հնազանդից եւ հաւանելոց. կարել մի ըստ միոջէ զիրս եւ զգործս, զբազմայեղանակ դիպմունս Հայաստան աշխարհիս, բա-

1 ԲՁ. ունի այսպիսի վերնագիր. Պատմութիւն Ղազարու Փարպեցւոյ, զոր արարեալ է վասն անցից Հայաստան աշխարհիս, առ ժամանակօք երանելի եւ սուրբ հայրապետացն մերոց եւ թարգմանչաց Սահակայ եւ Մեսրոպայ մինչեւ ցոր մարգպանութեան Վահանայ Մամիկոնոյ: Արտագրեցեալ ի սրբագիր օրինակէ ի սուրբ աթոռս Էջմիածին: Հրամանաւ գերընտիր գահակալի տրին, Տեառն Սիմեոնի Սրբազան կաթողիկոսի. ի թուոջ Փրկչին ՌԷԾՅԴ, իսկ ի մեր թուականիս ՌԲԾԻԳ: Զ. (նոր գրչով) եւ Ատ. ունին այսպիսի վերնագիր. Պատմագրութիւն Ղազարայ Փարպեցւոյ: Արարեալ ի իսկոյրոյ զօրավարին հայոց, եւ մարգպանին տեառն Վահանայ Մամիկոնոյ: Վերնագրից յետոյ Ատ. դնում է Նախերգանք. ԲԳտ. դնում են Յառաջաբան:

2 ՏՏ. չիք սկսեալ. Զ. սկսել

3 Զ. Նախ գրուած՝ ի մահն, յետոյ՝ ուղղած այսպէս

4 Զ. յԱրտաշրէ յորդոյ Սասանայ ունի լուսանցքում

5 Զ. Նախ՝ ստահրացւոյն, յետոյ՝ ուղղած այսպէս

6 ԶԱտ. չիք որդւոյ Պապայ, որդւոյ Արշակայ. այսպէս՝ ըստ ուղղագրութեան ԲԳտ.

7 ՏՏ. շարադրեալ

ա Հմմտ. Առակ. ԺԳ 1. Եփես. 2 1-3. Կող. Գ 205: